

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը
6 ռուբլի
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՕՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրության մէջ.
Մեր հասցեն՝ Тифлисъ, редакция «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «MSCHAK».
ՏԵՂԷՔՈՆ № 253.

Ոմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզումով
Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԵՂԷՔՈՆ № 253.

ՄՇԱԿ

(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊՐԱՆԻ ԲՈՒՄԵՆՈՐԿԱՐԴՈՒԹՅՈՒՆ
ՁԷ ԸՆԴՈՒՆՎՈՐԻՄ
ՀԱՍՏԵՄԲԵՐԻ
ТИФЛИСЪ, редакция «МШАКЪ»
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՁԵՆԻ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ՐՈՒԲԼԻ

Ամսական ՄԵՆՆ ԲՈՒՄԵՆ
Ամերիկա տարեկան 6 ռուբլի
Եւրոպա » 30 ֆրանկ
Պարկաստան » 10 ռուբլի
Հասցեն փոխիւմ համար պէտք է
ուղարկել 40 կոպ.

Կիրակի, հոկտեմբերի 12-ին

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՓՐԻԴՈՆԵԱՆ ՓՐԻԴՈՆԵԱՆՑԻ

մահվան տարեգրածին Նորաշէնի ու Աստուածածնի եկեղեցում (5-րդ փող.) կա-
տարվելու է պատարագ, իսկ յետոյ հոգեհանգիստ, որի մասին այլի տ. Մարիամ
Փրիդոնեանցը որդեկանցով յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծա-
նօթներին: Պատարագի սկիզբը ժամը 10-ին, իսկ հոգեհանգիստը 11½ ժամին:

ՀԱՆԴՈՒՆԵԼՈՒ

ՅՈՒՆԻՍԿԻ ԱՐԱՊ ԲԱՆԱՆԱՅ ԱՄԻՐԱՂԵԱՆԻ

եղեռնական մահվան տարեգրածին առիթով Բուխարայի հայոց ու Գեորգ եկեղե-
ցում կիրակի, ամսին 12-ին, պատարագից յետոյ ժամը 12-ին կատարվելու է հո-
գեհանգիստ, որի մասին այլի տարեգրածին Ամիրաղեանցը որդեկանցով
հայտնում են ազգականներին, բարեկամներին, ծանօթներին և լա-
զուհներին: Պատարագի սկիզբը ժամը 10-ին, իսկ հոգեհանգիստը 11½ ժամին:

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Հարած, հոկտեմբերի 11-ին

ՉՄԵՐԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ

ՀԱՄԱՆԵԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ

Պ. պ. անդամների, կանգնողների և հիւ-
րերի համար
Կը կայանայ

Կոնցերտ Օկեստրոն

(նոր կատարվողովում գրամոֆոն)
Կոնցերտի վերջը կը նուագէ սաղանդաբը:
Մուտքի գինը կոնցերտի դահլիճը արժէ
25 կ.

Հիւրերը, պ. պ. անդամների յանձնարարու-
թեանը, վճարում են 1 ռուբլի:

Կոնցերտի սկիզբն է երեկոյան 7 ժամին:
1—1

ՄՇԱԿ

Մ. Գ. ԴԱՆԻԷԼ-ԲԵԿ

Հնդուհներու } Առաւօտեան 10—2 ժ.
Թիւրք } Երեկոյան 4—6 ժ.
Հասցէ՝ Ртищевская ул., № 7.
(Հ. Բ.) Կ. 50—14

ԴՈՒՐ ՀԱՄԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԷՐ ՏԱԼԻՍ

Ինչպէս և պէտք էր սպասել, ա-
ռաջորդարանում գումարված Ներսի-
սեան դպրոցի համար հոգաբարձուներ
ընտրող պատուիրակների ժողովը, չը
նայելով նոյնիսկ այն լուրջ առարկու-
թիւններին, որ արին պատուիրակնե-
րից շատերը, չը նայելով նոյնիսկ
ներկայ հոգաբարձութեան կողմնակից
պատուիրակների խոստովանութեան
թէ այդ ժողովը իսկական թմամական
ժողով չէ, այնուամենայնիւ յայտա-
րարեց իրան իրաւաստ. և ձեռնհաս
քննելու թեմական այլ խնդիրներ և
կատարեց ժողովրդական իրաւունքնե-
րի ուղղորդացիւ: Այդ ուղղորդացիւյի
արդարացուցիչ պատճառ, որովհետեւ
է այն միակ հանգամանքը, որպէս թէ
թեմական ժողովը գումարումը հան-
րային է մեծ դժուարութիւնների,
թէ ևս կողմից, երէկվայ նիստում,
հարց է դրվել այսուհետեւ ամեն տարի
գումարել թեմական ժողով:

Մի կողմ թողնելով առ այժմ ներ-
կայ ժողովի ամբողջ բարոյական և
իրաւագիտական անանկութեան, ապօ-
րինութեան և անձեռնհասութեան մա-
սին խօսելը, մենք հայ հասարակու-
թեան լուրջ ուղղորդութիւն ենք հրա-
ւիրում թէ որպիսի անարժան միջոց-
ներ են դիմում ժողովի ղեկավար-
ները և դպրոցի աշակերտները: Իրանց գործած ա-
պօրինութիւնները արդարացիւ և

հասարակութեան աչքում անմեղք
երևալու:

Յայտնի է, որ Ներսիսեան դպրոցի
ներկայ հոգաբարձութեան գործու-
նեութեան մասին դպրոցի ֆինանսա-
կան և եկամտական ասպարիզում, հա-
սարակութեան մէջ շատ աննպաստ
լուրեր և փաստեր տարածվեցին: Հո-
գաբարձութիւնը զանազան հաշիւ տալ
իր ժամանակին աւելի ևս նպաստեց
այդ աննպաստ լուրերի տարածման:
Իսկ լուրերը և փաստերը յայտնում
էին, որ ներկայ հոգաբարձութիւնը,
բաղկացած մեծ մասամբ յայտնի կու-
սակցութեան անձերից, առանց ի նը-
կատի ունենալու դպրոցի նիւթական
և եկամտական վիճակը, տոգորված
միայն իր կուսակիցներին շահելու
մտքով, բացել է ծախքերի անպահիւ
զուռն, չը կազմելով նախօրոք նախա-
հաշիւ, չենթարկելով այդ նախահաշիւը
օրինական ատեսանների (ժողովի կամ
սինդիկ) հաստատութեան, որպէսզի
անարգել կարողանայ կատարել իր
ցանկացած ծախքերը և շահել իր կու-
սակիցներին: Եւ այդ ապօրին ու գեղ-
ծարար գործելակերպի արդիւնքն այն
է եղել, որ հոգաբարձութիւնը ստիպ-
ված է եղել գրաւ դնել անձեռնմխելի
զբաղմունք կազմող արժեթղթեր և
դպրոցը ունեցել է անազիր ղեկփնջիտ:

Հոգաբարձութիւնը, կրկնում ենք,
զաքարէական պապանձումն էր պա-
ստանում այս յուզիչ լուրերի առիթով,
և միայն «Կոստի» և այլ թերթերի
մէջ կողմնակի կերպով յայտարարու-
մէր, թէ նա արմատաւորական լուրերում
է պատասխանում այդ չարամիտ լու-
րերին, թէ նա պարտաւոր չէ հաշիւ
տալ հասարակութեան, այլ հաշիւ կը
տալ միայն իրան ընտրող պատուի-
րակներին:

Մնում էր ուրեմն սպասել պա-
տուիրակների ժողովին: Վերջապէս,
կայացաւ և այդ ժողովը, բայց հոգա-
բարձութիւնը այդտեղ նա դիմեց մի
ծարպիկ միջոցի: Նա հրատարակեց իր
տեղեկագիրը և հաշիւները միայն ժո-
ղովը բացման օրը և զբաղմունքով
թէ մամուլը և թէ հասարակութիւնը
հարաւորութիւնից քննել կանխօրէն
հաշիւները և ստուգել թէ որքան ի-
րաւացի կամ անիրաւացի են եղած
ամբաստանութիւնները: Իրաւ այդ ա-
նարժան վարմունքը մենք արդէն շեշ-
տեցինք:

Այժմ տեղեկագիրը հրատարակված
է և եւ նա ամենափառաւոր կերպով ա-
պացուցանում է, որ տարածված լու-
րերը և փաստերը միանգամայն ճիշտ
են եղել: Տեղեկագիրը մէջ տպված վե-
րապատգով յանձնաժողովի ղեկուղա-
գիրը հաստատում է, թէ այս երկու

տարվայ ընթացքում, այսինքն ներկայ
հոգաբարձութեան օրով գոյացել է դե-
ֆիցիտ 98,440 ռուբլի, ուրեմն մօտ
100,000 ռուբլի, և թէ այդ դեֆիցիտը
գոյացել է լուր ախ պատճառով, որ
մուտքը և ելքը մէջ հաւասարակշիւ-
թիւն չէ պահպանվել: Եթէ այդ գու-
մարից դուրս հանենք մօտ 35,000 ռ.,
որ հին հոգաբարձութիւնն է պարտք
արել Լազարի համար, ուրեմն մօտ
60—65,000 ռ. աւելորդ ծախք արել
է ներկայ հոգաբարձութիւնը, և արել է
միայն նրա համար, որ ինքնագրու-
նանց թողնուածութեան, բացել է Սօ-
լոյակում և Հաւարարում առանձին
բաժանմունքներ:

Եւ այդպիսի մի սոսկալի դեֆիցիտը,
աւելորդ և աննպաստ ծախքը հոգա-
յու համար հոգաբարձութիւնը ստիպ-
վել է ձեռնամուկ լինել անձեռնմխելի
գումարներին, գրաւ դնել արժե-
թղթերը:

Ահա ինչ է առում տեղեկագիրը, ա-
հա ինչ է հաստատում վերաստուգող
յանձնաժողովը:

Անհաշու, անկողմնակալ ժողովը կը
զանչէր, որ ներկայ հոգաբարձութիւնը
գործել է օրինազանցութիւն, իրաւա-
զանցութիւն, որ նա աննպաստ կէս-
պիւրիզմներով անելով, վտանգել է ար-
մատապէս դպրոցի անտեսական վիճա-
կը, որ, հետևաբար, նա արժանի է
միայն պարտաւորի և հեռացուցման.
բայց, մենք համոզված ենք, որ ներկայ
ժողովը մեծամասնութեամբ կուսակ-
ցական լինելով, ընդհանրապէս, վստա-
հութեան քուէ կը տալ այդ ժողովին
և կանստաւոր կը ձանաչէ հաշիւը:

Բացի դրանից, մենք պէտք է հա-
սարակութեան ուղղորդութիւնը հրաւի-
րենք և մի այլ այլաբանութեան վրա:
Պատուիրակների ժողովը որոշել է
հենց սկզբից թող չը տալ կողմնակի
անձանց խօսել, կարծիք յայտնել ժո-
ղովում: Այդպէս լինելուց յետոյ ու-
րեքս բարոյական անմարդութիւն պէտք
է ունենալ վեր կենալ և ասել, ինչպէս
առում է «Կործր» երէկվայ առաջնոր-
դող յօդուածում, թէ «Երբ որ տարա-
ժող, մտքի պղծութիւնը մարդիկ բաշխ-
ութիւն պէտք է ունենան հրապարակ
զալ ոչ թէ անհրաժեշտով, այլ մերկ
փաստերով: Նրանք պարտաւոր են թե-
մական պատգամաւորների առաջ բաց
անել իրանց հիմքերը»:

Իսկ դրանով էր առաջուց մարդ-
կանց հնարաւորութիւնից խօսելու,
փաստեր ներկայացնելու, դուք գտնու-
մէ նրանց բերանը և յետոյ վեր կե-
նում պտուտ, թէ եկեք պատգամա-
ւորների առաջ ապացուցէք ձեր ա-
ռաժանքը:

Եթէ անկողմ է ձեր հրաւերը, ին-
չո՞ւ որոշումն էք կայացրել թող չը
տալու կողմնակի անձանց քննել: Ուր
մնաց լոգիկան, ուր մնաց իրիւրը:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լօնդոն, 9 հոկտեմբերի
Համայնքների պալատի նիստում
Գրեյը, պատասխանելով կոնֆերենցիա-
յի մասին ուղղված հարցապնդման, ա-
սաց, որ ներկայումս մեծ պետութիւն-
ների միջև տեղի ունեցող բանակցու-
թիւնների նպատակը կայանում է նրա-
նում, որպէսզի կարելի լինի որոշ հա-
մաձայնութիւն ձեռք բերել կոնֆերեն-
ցիայի ճրագրի վերաբերութեամբ, որը
նոր անհնգատութիւն չը պատճառե-
լով թերեւ վերացնէ այն դժուա-
րութիւնները, որոնք ծագել են վեր-
ջին դէպքերի շնորհիւ: Որովհետեւ
Թիւրքիան ամենից առաւել վտանգից
զրահեց, անգլիական կառավարու-
թիւնը յոյս ունի, որ մեծ պետու-
թիւնները իրանց գլխաւոր նպատակը
կը դնեն—ապահովել Թիւրքիայի կոմ-
պէնսացիաներ, պաշտպանել նրա շա-
հերը և ամբարցնել նոր ըէֆիւր, որի
գործադրութիւնը այնքան աղօղ
ներդրութիւն ունեցաւ օսմանեան
պետութեան կառավարութեան վրա
(ժամանաւորութիւն): Թիւրքական կա-
ռավարութեան համար անհրաժեշտ

պայման է ներկայանում կոնֆերեն-
ցիայի որեւէ ճրագիր ընդունելու:

Քանի որ Թիւրքիան դեռ չէ յայտ-
նել իր հայեացքը արված առաջարկու-
թիւնների նկատմամբ, Գրեյը ոչ մի
նոր բան չէ կարող յայտնել այդ հար-
ցի առիթով: Կոնֆերենցիա գումարե-
լու միտքը յղացաւ ամենից առաջ
Թիւրքիան, սակայն կոնֆերենցիայի
միտքը յայտնեցին համարեա միաժա-
մանակ ամեն կողմից:

«Վաղաժամ կը լինէր,—ասաց մի-
նիստը լիբերալ Լինչի հարցապնդման,
—բացատրութեանը տալ որեւէ ա-
ռաժան պետութիւնից. մեծ պետու-
թիւնները, միմեանց հաղորդագրու-
թիւնները անելով, նպատակ ունենի
պարզել իրանց փոռը նախ այն
հայեացքները, որոնք գոյութիւն ու-
նեն զանազան յառաջարկութիւնների
վերաբերութեամբ» (Հ. Գ.):

4. Պօլս, 1 հոկտեմբերի

Սուրբանի պալատից արձակված են
փոքր շատեղ աչքի ընկնող պաշտօններ
վարող գերմանացիներն ու ասու-
րիացիները: Նրանց հեռացումը պաշ-
տօնապէս պատճառաւորված է ծախ-
քեր կրճատելու անհրաժեշտութեամբ:
Սակայն այստեղ մասն մէկին հասկա-
նալի է, որ հեռացնելու տեղի է ունե-
ցել Աստորիայի ու Գերմանիայի դէմ
սկսված ընդհանուր դաշնային ազդե-
ցութեան ներքոյ, որը հետզհետէ լայն
չափեր է ստանում երիտասարդ-թիւր-
քերի մամուլի մէջ: («Ք. Բ.»)

Չը նայելով, որ բոլորները ցնծու-
թեան մէջ են Ֆերդինանդին թագա-
ւոր հրատարակելու համար, տեղական
սօցիալիստները այնուամենայնիւ նը-
րան շարունակում են իշխան անուա-
նել, պահանջելով ազգային ժողով
հրաւիրել, որը այդ հարցի առիթով
իր վճիռը կը տալ: («Ք. Բ.»)

Հեռագրական գործակալութիւնը մի քա-
նի փամփուկ առաջ հաղորդել էր յոյների
ու թիւրքերի միջև տեղի ունեցած ընդհա-
ման մասին պոլսում, այդ առիթով «Ե. Բ.»
ստացել է հետևեալ հեռագիրը 4. Պօլսից,
հոկտեմբերի 2-ից.

Այսօր արեւմտեղ ընդհանուր տեղի
ուսեցաւ թիւրքերի ու յոյների միջև
կրօնական հողի վրա: Ընդհանուր մի-
ջային աստուղ ունէր: Մի երիտասարդ
թիւրք կին, Բեդրէ պազանտով, եր-
կու օր առաջ յունաբանութեան
ընդունեց: որպէսզի ամուսնանայ
յոյն Տօքթիի հետ: Հարսանիքը տեղի
պիտի ունենաւ երէկ, բայց պառակա-
րութիւնից առաջ եկաւ նորահարսի
հայրը զրգուցած թիւրք ամբոյի ու-
ղեկցութեամբ: Հայրը անիծեց աղջ-
կանը: Յոյները ու թիւրքերը միջև
ընդհանուր աստուղացաւ: Օգնութեան
հասնելով աստիկանութիւնը՝ գոյգին
փրկելու համար տարաւ նրան ոս-
տիկանատուն, բայց հեռագրեւ բազ-
մացող ամբոյը պաշարեց աստիկանա-
տունը և, գազանաբար ձեծելով սի-
րահանքներին, սպանեց Տօքթիին ու
մահացու կերպով վրաւորեց Բեդրէին:
Դէպքի տեղը եկած հեծելազուններ
ամբոյը ցրելու համար զորս տուեց
նրա վրա:

Այսօր լայն տեսած յունական թե-
թերը լիակատար հանգստութիւն
են պահպանում դէպքի առիթով:

Լօնդոնից հաղորդում են, որ տե-
ղական պաշտօնական շրջաններում
խօսում են Վիեննայի և Բեռլինի մի-
ջև նկատվող ստանութեան մասին և
եղբայրացում են, որ Գերմանիայի
«Փառաւոր միայնութիւն» է սպառ-
նում: («Ե. Բ.»)

Լօնդոն, 9 հոկտեմբերի

Բելյուրի հարցապնդման բոլորա-
կան դիպլոմատիական գործակալու-
թիւնը հաղորդում է, որ ոչ մի տեղե-
կանք նա չէ ստացել այն մասին, թէ
իր ընդհանուր և տեղի ունեցել բոլ-
որական և թիւրքական զորքերի

միջև: Բոլորական հաւատարմատարը
յայտնեց, որ նրա կառավարութիւնը
մտադրի է խաղաղութիւն պահպանել,
ուստի Բոլորական ոչ միայն չի շա-
հագործի սահմանային թիւրքացու-
թիւնները, այլ և չի վարվի այն-
պէս, որպէսզի այդ թիւրքացու-
թիւնները, եթէ անգամ տեղի են ու-
նեցել, պատերազմի ազդանշան չը
ծառայեն: Ապա նա ասաց, որ Սօ-
ֆիայից տեղեկութիւններ ունի ստա-
ցած այն անմիջական բանակցու-
թիւնների վերաբերեալ, որոնք իբր
տեղի են ունենում Բոլորականի և
Թիւրքիայի միջև. եթէ այն տեղեկու-
թիւնները, որոնք վերաբերում են այդ
բանակցութիւններին, ճշմարտութեան
դէմ չեն, հիմք չը կայ վախճալու,
որպէսզի բոլորական ժողովուրդը չը
հազարադի իր պարագլուխների քա-
ղաքականութեան: («Հ. Գ.»)

Վիեննա, 9 հոկտեմբերի

«Wiener Zeitung»-ը հրատարակել
է ֆինանսների մինիստրութեան կար-
գադրութիւնը, որ, ունգարական կա-
ռավարութեան համաձայնութեամբ և
հիմնվելով մինիստրների խորհրդի ո-
րոշման վրա, արգելում է երկու պե-
տութիւններից—հաշիւով նաև Բօս-
նիան և Հերցեգովինան—արտահանել
և նրանց միջով անցկացնել ամեն տեսակ
պատերազմական մթերքներ, զանա-
զան պայթուցիկ նւթեր, ձիեր, աւա-
նակներ և այլն: Ֆինանսների մինիստ-
րը իրան է վերապահում այդ առաք-
կաների տարածման ստուգութեան ի-
րաւունքը: («Հ. Գ.»)

Բուդապէստ, 9 հոկտեմբերի

Ցիտիէի աստորական մինիստր-
ըզիլեյնտը իր կառավարութեան յանձ-
նարարութեամբ իշխան Նիկոլային և
չեխօգրական կառավարութեանը մեծ
ցաւակցութիւն յայտնեց Չաքերի
դէպքերի առիթով: («Հ. Գ.»)

Բուդապէստ, 9 հոկտեմբերի

Աստորական պատգամաւորութեան
մասնաժողովը երկօրեայ վիճարա-
նութիւններից յետոյ ընդունեց դի-
ւորական սովորական բիւլէն: Սօցիա-
լիստները կառավարութեանը լուրջ
կատարանքներ ուղղեցին, որ նա ար-
ձագանք չը ստուց պատգամաւորու-
թեան արտայայտած ցանկութեան և
չաւեկացից զինւորների ոտնձգելու:
Չիւրական մինիստր արդարացրեց
գործերի հոկտեմբերի 7-ին Լիւբլ-
նում ունեցած գործելակերպը, յայտ-
նելով, որ գործերն անպայման իրա-
ւունք ունենի դէպքի դիմելու, բայց
սխալ կայանում է նրանում, որ մի
քանի անգամ հարցանքներից կրակել
են նախ քան հրամանը. դա սակայն
բացատրվում է հրամանատարի ձայն
խեղդող աղմուկով և զինւորների չա-
փազանց գրգռված դրոշմութեամբ:
(«Հ. Գ.»)

Բուդապէստ, 9 հոկտեմբերի

Աստորական պատգամաւորութեան
արտաքին գործերի մասնաժողովում
բարձր ինքնատի յայտնեց, որ այժմ
բանակցութիւններ

Թեան հարցով դիմել էին իրան, ստույգ է. «Երբ չէ՞ք ուզում իրերի կարգերի վերա- հաստատությունը դուք ուզում էք, որ արձակ- վին և Արամը—և Տաճարը: «Ոչ, կոպտեմ են նրանք.—հապ միանեմք»: Միանեմք կարճակեմ—ստույգ է.—բայց Արամին, Տա- ճարին և մի քանի ընկերներին կը պահեմ, պատասխանաբար իմ զորքը իմ անսե- լով: Անցնում են երկու երեք օրեր ու բան- տարիքները նորից մնում են բանտում. լուր է տարածվում, որ թիւրք ամբողջ զորքով է և պատրաստվում է կոտոր- ւել բանտարկյալներին: Հենց որ նրանք դուրս գան բանտից, մերիկ (զինուորա- կան) փախչին առաջարկվում է զորքերով պահպանել բանտարկյալներին բանտից ելը: Բայց նա չի համաձայնվում, ասելով թէ ով ուզում է թող համարձակի դեմ գալ բան- տարիքներին: Վերջին հրամանները էլ չենք օր անցկենալուց յետ, հազիվ թէ բանտար- կյալներին 220 հոգի արձակվում են յուլիսի 29-ին Վանի բանտից և մօտ 30 էլ Ռաստնի և Բաշ-Կալի բանտերից. իսկ Արամ ու Տա- ճար ընկերներին հետ նորից մնում են բանտում. չէ որ կուսակալը նրանց մասին պատասխանատվություն էր վեր առել: Մի- ձեռն հրաման է գալիս՝ «քաղաքական յան- ցանքով ոչ ոք չը պետք է մնալ բանտում, թէկուզ տանական մարդիկ էլ սպանած լի- նին»: Ուստի պատասխանատվություն վեր առնող կուսակալը ստիպված է լինում բո- լորով էլ քաց թողնել: Օգոստոս 5-ին միայն թէ իր խնդրը տեղը բերած լինելու յամա- ութեմամբ՝ Տաճարին ուղարկեց Կ. Պոլսի իր հօր մօտ գնալու, իբրև թէ վախճան է: Թիւրք զորքոված ամբողջ կատարությունից: Զեք հաշուով այս ինքն իր կուսակալի վրա, որ մօտ ժամանակից Արամին մի գլուխ քա- նի տանական ընկերներով կախարանի վրա շարելու էր հրճվում:

Բայց ազատության պայծառ լույսից կու- ռացած այս կուսակալը այլ ևս վախճան չէր կարող երկար մնալ. շուտով իր պաշտօնա- կույթին էլ վրա հասաւ և օգոստոս 12-ին դիմելով փախուստ տուեց Վանից. որովհետև վերջին պահին կատարությունից արկղից մի քանի հարիւր ոսկի և հայերից՝ գրաւած զենքերից էլ մի քանի ընտիրները գողա- ցել էր, ինչ որ յայտնվելով առաջին երեկո- լին իր տունը զորքերից պաշարված ու ետ առնված էր. ուստի վախճանով լույսով հասարակության երեւոյցը, որ անշուշտ պիտի սուղէր նրան, գիշերով փախաւ: Իր ընտիրը դեռ չէ նշանակվել. փախուստը բար նրա պաշտօնը վարում է զինուորական հրամանատարը: Գնալու է Կասթիլոնի կուսակալ. էլի չի սխտեղ. մի պաշտո- նակալ վրա երբ ըողոր է բարձրանում, մի տեղ են դրվում, արքայի թիւրքերով չը կան ուրիշ արժանաւոր մարդիկ. հիւսն հապա պաշտի հաղաբարձ օժէն թիւրքերը, որոնք տարագրվել էին զանազան տեղեր, բայց չեն կարծում, որ կասթիլոնիցից էլ ընտիր են նրան, վաղից փութացին հեռա- գրով հարց տալ Վանից կուսակալի նկա- րագրի մասին և պատասխան էլ ստացան. կասթիլոնիցիները աշխույժ ժողովուրդ են և արդեն սրանց առաջ իրանց երկու կուսակալներին ձառքի էին:

Մարտի (Կը շարունակվի)

ԲԱՆԱՊԱՏԻՐՆԵՐ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

Պատրիարքական տեղապահը դիմումն արել է մեծ-հարգանքով, խնդրելով նիւթական օգնություն տալ պետական գանձարանից՝ արտասահմանից եկող բազ- մաթիւ հայ գաղթականների համար:

Հնչական գործիչ Ս. Մուրատյան «Արեւիկ» մէջ տպված իր մի յօդուածով հետաքրքրական տեղեկութիւններ է հաղոր- դում, թէ ինչու այդ կուսակցութիւնը չը մասնակցի Պարզի կոպտեմին, քանի որ ինքն էր դեռ 1906 թ.ին կոչ անողը այդպիսի մի կոպտեմ գումարելու: Այդ տեղեկութիւնները երևում է, որ կոպտեմ- սին հրաւիրված 10-ի չափ յեղափոխական կուսակցութիւններից միայն 3-ը ներկայ են եղել կոպտեմին: Մակեդոնական, յունա- կան, արաբական, ալբանական, թիւրքական, հայկական միւս երկու կազմակերպութիւն- ները, ինչպէս և պ. պ. Միսա Զեքալը և Արշակ Զօպանեան, որոնք նոյնպէս հրաւիր- ված են եղել, մեծից են մասնակցելու, որովհետեւ Դաշնակցութիւնը կազմել էր ծրագրելով առանց խորհրդակցութեան այլոց հետ:

Պատրիարքարանի մէջ կազմված պատ- լույ առնելու անունը է հրատարակել Անա- նիս Կ. Հաղորդակցութեանին և հերքել՝ նրա վրա բարդված ամբաստանութիւնները:

Մի երկու հայ լրագիրներ հրատարա- կած լինելով, թէ անգանձելի (աղաւթի) միացած տուրքերը այլևս չը պետք է գանձ- վին և զինուորական տուրքն ևս չը պետք է վճարվի, թիւրքաց կառավարութիւնը պաշտօնական զեկուցումով անհիմն է յայ- տարարել այդ լուրերը:

Խաղաղութիւնը ազգային գաւառական ժո- դովը որոշել է պաշտօնական անկ առաջ- նորը ընտրել Վ. Պէրիկեանին իր յոռի ընթացքի պատճառով:

Բաղէշի առաջնորդ Կեռնոս Կ. Գրի- գորեանը տեղեկացրել պատրիարքարանին, թէ Ուրիանի հայերը անկարգաբար կը կը- լան:

Քուսնի և հարստահարութիւններ են կրում քիւրդերի կողմից: Տեղապահը պետք եղած դիմումն է արել պատկանաւ իշխա- նութեանը վերջ տալ այդ հարստահարու- թիւններին:

Տիգրայեակերտի թեմի առաջնորդա- կան տեղապահ է ընտրվել Գեորգ Կ. Իր- անուսեան:

Կ. Պոլսի յոյս մի լրագիր, «Բոստոն» անունով, հրատարակած լինելով թէ հայերը կուռ-Կապուի մէջ Հայաստանի դրօշը պար- դել են և հայ թագաւորների զինանշանն- րը բարձրացրել են, մի քանի հայեր դատ են սկսել այդ լրագրի դէմ, իբրև զըր- պարտի:

Յայտնի հայ գործիչ և գրող Կ. Պոլ- սի կենտրոնական վարժարանի նախկին տնօրէնը, «L'Arménie» թերթի խմբագիր- հրատարակիչը, Միսա Զեքալ, Պարզից վերադարձել է Կ. Պոլսի: Լրագիրները լի են նկարագրութեամբ այն փառաւոր և շքեղ ընդունելութեան, որ Կ. Պոլսի հայու- թիւնը ցոյց է տուել իր տարագիր և աք- տորիալ գործիչին: Բազմաթիւ շոգնաւեր, դիմաւորողներով, զարդարված օսմանեան դրօշներով և շոգնաւերով հայրենասէր Մի- սա Զեքալը վերադարձելով, գնացել էին ընդ առաջ Վերջինի մեծ շոգնաւեր, ո- լով գալիս էր Ս. Զեքալը: Դիմաւորողները մէջ կային և պատգամաւորներ օսմանեան Մ. և Առաջնորդութեան կոմիտէի կող- մից: Բժշկական վարժարանի ուսանող՝ Հասան Բիգալ ընդ յանուն կոմիտէի թիւր- քերէն մի բանախօսութիւն անելով, ասաց, ի միջի այլոց, «Օսմանցի եղբայրներ, այ- սօր մեծ ուրախութեամբ կը գտնուիք Մար- մարայի իրերին մէջ՝ սուրացող շոգնաւեր մը մէջ: Հոս իսլամներու և հայերու, այդ երկու ժողովուրդներու աշխարհ արդարեւ թեմա՛ն էր փայլել, սիրտերը ազատութեամբ կը բարբախն և իրիցներ հայրենիքի ձայ- ներուն մէջ կը թրթռան: Այսօր ցնձագին իր փութանք դիմաւորելու մի հայրենասէր եղբայրը՝ Միսա Զեքալ է ֆէնիկս, որ տա- րիներէ ի վեր գաւառներ, ընտանիքը, եր- կիրը թողուց և իր հայրենիքին համար տանջանքներու ու նեղութեանց տակացի»:

Մ. Զեքալին ցոյց տուած համակարան ցոյցերը և շքեղ ընդունելութիւնը ուղադրա- են մանաւանդ այն պատճառով, որ նա վեր- ջին տարիներ Պարզի մէջ ենթարկվեց հայկական Դաշնակցութեան անարդար հա- լածանքին մինչև այն աստիճան, որ Մ. Զեքալը, դառնացած զարդարեց իր թերթի հրատարակութիւնը և սկսեց առանձնացած կեանք վարել: Դաշնակցականները, ինչպէս երևում է խոհմեմութիւն են ունեցել ձեռնու- պահ մնալու և որեւէ անգամ չը ցոյց չեն ա- րել այդ փառաւոր ընդունելութիւնը իս- փանելու, ինչպէս առհասարակ սովոր են գործել իրանց հակառակորդների վերաբեր- մամբ, երբի, ընկնելով Մ. Զեքալին ար- տայայտած հանգան ժողովրդական ցոյցերից:

Շուտով մենք ուսումնասիրեն ևս առիթ կու- նենանք ողջունելու միջ մօտ պ. Մ. Զեքալին, երբ նա կը գալ մասնակցելու կաթող. ընտ- րութեան, իբրև եղբայրս պատգամաւոր:

Ժամ. խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱՄԵՆԵԱՆ
6. ՏԵՐ-ՄԱՐԿԱՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՐԻՆ ՀԻՒՆԻՄԵՆՈՅ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.

(Կուլիա, Վոսոցովի արձանի հանդէպ)

Ամս օր, քաղի կիրակի օրերը
ԱՌԱՍՈՏԵՐԵՐ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերա- բուժութեան և վնասակար (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՉԻԿՈՎՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներարային:

Չ. Բ. ՔԱՐԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. ման- կաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Ն. Տ. ՄՈՒՆԻ—10—12 ժ. ակնաշիկ, կո- կորդի և քթի հ.:

Մ. Կ. ԱՆՏՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վնասակար, վերաբուժութեան և միջատի:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հ.:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—11½ ժ. ներքին և երեխայոց հ.:

ԿԻՆ.ԲԺՇԿԱՆ. Մ. ՏՈՒՐՈՎՈՎ—11½—2 ժ. մանկաբարձութեան:

Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՈՎ—12—12½ ժ. կա- նանց և մանկաբարձութեան:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՅՆՎՈՍԿԱՆ—ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ, կանանց և երեխայոց հ.:

Ի. Ֆ. ՄԱՐԿԵՆՎՈՎ—6—7 ժ. ներ- քին և երեխայոց հ.:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—11½ ժ. ներքին և երեխայոց հ.:

Հրատարակողի վերաբերումը
Բժշկապետ Բ. Նախարարեան

Բ Ժ Ի Շ Կ

Գ. Ն. ՄԱՐԿԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, ա- տանձնապէս տարածքի և արկերների հի- վանդութիւններ:

Հիւանդների ընդ 12—1 առաւօտեան
գունդութիւնը՝ 5—6 երեկոյեան:
Միջանդիւս փող. № 36, ա. Ճավախիձէշի:
100—31

Հ Բ Ա Ի Է Բ

Կաթնուղիէ ա. Աստուածածին (Մէլլաւի ա. Գեորգ) եկեղեցու ծխական հոգաբարձու- թեան ժամանակը լրացած լինելով՝ թեմիս սրբազան առաջնորդի առաջադրութեամբ պիտի կատարվի նոր ընտրութիւն. ուստի սեպտեմբերի 28-ին ժողովը չը կայանալով՝ սրանով հրաւիրում են նորն եկեղեցու ա- րական սեռի սանձանկալ հասակ ունեցող բոլոր ծխականներին շնորհ բերել եկեղեցի ձեռնութեան 12-ին, կիրակի, ժամը 11-ին մասնակցելու ընտրութեան: Ժողովը վերջ- նակաւ է:

Կաթնուղիէ եկեղեցու միաբան՝
Ստեփաննոս ա. քահ. Ստանէլեան
(չ. Կ.) 2—1

Հ Բ Ա Ի Է Բ

Համաձայն հրամանի նորին բարձր սըր- բազնութեան, Թիֆլիսի կուլիայի Նորաշէն ա. Աստուածածին եկեղեցու և Թանդոյեան եկեղեցու ծխականները հրաւիրվում են ձեռնութեան 12-ին, ժամը 12-ին, ցերեկով նորն Նորաշէն եկեղեցու դասժամ ընտրու- լու չորս աշխարհական և երկու հոգևորա- կան հոգաբարձուներ կուլիայի գերեզմա- նատան պարիսպը շինելու, կառավարելու և պահպանելու համար: Երկրորդ և վերջին հրահանգը՝

Սխառեք՝
Ներսէս ա. ք. Համադիանց
Առաջնորդ Գ. Տէր-Յովհաննիսեանց

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»
Ս. Ս. ԼԻՍԻՑԵԱՆԻ
ՀԱՅՐԵՆԻ ԱՌԱՊԵԼՆԵՐ ԵՒ ՎԵՐԵՐ
Միակաւ զար. Գ. Բաժնամուտի նիւթ
Գինն է 35 կօպէկ:
Դիմել «Գուտաներից» գրախանութիւն:
5—1

УГОЛЬ

КУЗНЕЧНЫЙ, ПАРОВЫЙ,
ПЛАМЯ, АНТРАЦИТ, КОКС.
ЦЕНЫ ОПТОВЫЕ.
А. БРАУХЛИ, Харьков.

(ա. օ.) 52—28

Բ Ժ Ի Շ Կ

Ա. Մ ի ի թ ա թ ա ն ց

Արիֆիկա, վնասակար, միջոցառական եւ մորթու ցաւեր

Ընդունելութիւն 12—2 ժ. ցեր-
անին օր 5—7 ժ. երեկ

Սօլալի, Բէհրուսեան փողոց № 33.
(չ. Կ.) 100—13

ՄԻ ՖՐԱՆՍՈՒԶԻ ՕՐԻՈՐԻ

ապիւն է ֆրանսերէն, անգլիերէն լեզու-
ների և նկարչութեան դասեր:
Հասցէ՝ Բերուսովկայա № 56, բնակարան
Եակուլովի № 7.
10—9

1 Вый СОРТ.

ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԷ

Երբ տալ միայն մշտական օրացոյց ունեցող ժամացոյց,
Ամեն մի մարդու քիչ չի լինի պատահած, երբ նա
հարկաւոր մօժեցնում դժուարացել է իմանալ թէ որ
օրն է և ամսի քանիսը: Քիչ կորուստ չէ եղել
հենց նրանից, որ անկարելի է եղել ստոյգ
որոշել ամսաթիւը: Դրա համար էլ իւրաքանչիւրին
անհրաժեշտ պահանջ պիտի զգացվի ունենալ այնպիսի
ժամացոյց, որը շարունակ կարողանայ ճշգրիտ կերպով
ցոյց տալ հարկաւոր ժամանակաշրջանը: Եւ պայմա-
նաւորվել են ժամացոյց-օրացոյց պատրաստող շէնցա-
րական խորհրդարան ֆաբրիկաներից մէկի հետ և կա-
րողանում են ուղարկել այդ տեսակ ժամացոյց չը տեսնված գնով, միայն
4 րոպի 50 կօպէկով. 2 հատը—8 րոպի 50 կօպէկ:
Այդ ժամացոյցը իսկական «Անկեր» է, ընթացքը 15 քարի վրա, սեւ պողպատից,
լարելը 40 ժամը մի անգամ, մետաղէ ցիֆերաւորով, աւտօմատիկ կերպով ցոյց է
տալիս օրը, ամսաթիւնը և ամիսը: Ծանապարհածախքը 1—4 ժամացոյցի համար 40
կօպ., Սիբիր—75 կ.: Նորածն ոսկուց կարճ շրջալի՝ րեբիօկով—75 կ. և 1 ր. 50 կ.,
երկար շրջալի—2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.: Ուղարկւումը վերադիր վճարով և առանց
կանխավճարի:

Հասցէ. Единств. Пред. И. ШТУМФЕЛЬДЪ, Варшава, Св. Креста № 48.
Թղթակցութիւնները ուսուցին և գերմաներէն լեզուներով:

(11, 14, 23, 28, 4, 11) 6—1

ԿԼԻՆԻՈՐ ՏԱՐԵՆԻ ԳՈՒՄԱՐԸ 75,000 Բ.

11.750 տոմսի 1.263.000 րուբլի գումարի

Վեհապետը տեղի է ունենում իւրաքանչիւր ամիս Վարշաւայի Պետական բանկում:
Ամբողջ տոմսին արժէ 98 ր., 1/2 տոմ. 50 ր., 1/4 տոմ. 25 ր.—կէս
տարվայ համար, այսինքն V կարգի իրաւունքով (վիճակաւորի) հաշւած
պատիւ ծախքը, հանգած թղթերը և ապահովագրութիւնը՝ առաջին 4 կար-
գերի մէջ տարվելուց:

Վարելի է մաս-մաս վճարել, առանց տոմսի գինը անկանալու: ♦ Հաշւած ապահով. ծախքը:
1/10 մասը տոմ. ամբողջ 5 կարգերի համար՝ 10 ր. Գուտի ծախքի և հաշւած
1/20 մասը տոմ. ամբողջ 5 կարգերի համար՝ 5 ր. Թղթի համար 1 ր. իւրա-
քանիսը փախցի:

Առաջին 4 վիճակաւորութիւններից մէկի մէջ մասնակցելը

ա) Տոմսակի արժէքը զուրս գալով՝ տարած դէպքում
—ամբողջ տոմ. 10 ր., 1/2 տ. 5 ր., 1/4 տ. 2 ր. 50 կ.
բ) Տոմսակի արժէքը զուրս չը գալով՝ տարած դէպ-
քում—ամբողջ տոմ. 12 ր., 1/2 տ. 6 ր., 1/4 տ. 3 ր.:
50 կ.

Վիճակաւորի ցուցակը և ամեն մի բա- ՝ Այս յայտարարութիւնը տպագրվում է շա-
ցատրութիւն ուղարկում ենք սրբով և ձրի: րաթի մի անգամ միայն:

Банкирский дом
Варшава, Братская № 18. Л. В. ЛАНДАУ и К-О
(14, 4, 11) Варшава «Ландаубанк»
3—3

Մրանով յայտնում են ի գիտութիւն յարգելի

ՀԱՅՍՎԱՃԱՆՆԵՐԻ,

որ Սաւաւոյով փախուժւալ բացել են հազարավաւաւաւոն:

Դիւաւոր նպատակ է մատակարարել Եւրոպական քաղաքներին ամեն տեսակ ճաշատանի և ալիւր
թէ տեղեցիս և թէ շրջապա կայարաններից:
Ալիւր պատրաստում են սեփական ընտիր ցորենից՝ հետեւալ տեսակներով—«Կուրպա-
կա», «Եւթանկա» և «Բազմօր»:

Հետաքրքրվողներին իսկոյն ուղարկում են նմուշները՝ միաժամանակ նշանակելով և գները:
Գները զգալի փոփոխութեան ժամանակ կը նշանակեն յայտնվում է հեռագրով:
Մուրում են ի նկատի ունենալ, որ ամեն մի ապրանք ևս գնում են առաջին ձեռքից,
այնպէս որ այդ հանգամանքը հնարաւորութիւն է տալիս ինձ վաճառել ուրիշներին ամե-
նաւորմալ գներով:

Յուսով են, որ յարգելի վաճառականները անուշադիր չեն թողնի իմ ֆիրման:
Պատուէրները կը կատարվին կարիդին չափ շտապով, ամենայն ճշտութեամբ և բարե-
խղճօրէն:

Թղթակցութիւնները հայրենի և ուսուցին լեզուներով:
Յարգանքով՝ Մ. Յ. ՖԱՆԼԱՆԿԱՆ Ե
Ներքին և երեխայոց հ.:

Նաճակի համար. Տաւրօպօլ-Կոնս. Մ. Ֆ. Ֆալաքան, փող. յա. № 48.
Հեռագրի համար. Տաւրօպօլ-Կոնս. Ֆալաքան.
(չ.) 50—8

1865 թ. 1870 թ. 1882 թ. 1896 թ.

ԿՐԿՆԱԿՈՇԻԿՆԵՐ

1860.
T.P.A.R.M.
С.ПЕТЕРБУРГЬ.

Իսկականները միայն այս գործով

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԲԵՋԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՐԱՅԻ
ԸՆԿ. Ա.-ՊԵՏԵՐԲՈՐԴԻՈՒՄ
ԼՐԻՒ ԵՐԱՇԽԱՌՈՐՈՒԹԻՒՆ

չ ա ռ յ ա տ կ ո ռ ք ե ա ն հ ա լ ա թ

ՊԵՏԵՐԲՈՐԴԻՈՒՄ
ՍՏԱՎՊՈԼԻՍ
ԲԻՐՅԱՆՈՒՄ
ՎԻԵՆՆԱ
ՎԻԶՆԱՅՈՒՄ

ՄԱՐԿԱՆՈՒՄ
ՕՐԿԵՍՏՈՒՄ
ԲԻՐՅԱՆՈՒՄ
ՎԻԶՆԱՅՈՒՄ
ՎԻԶՆԱՅՈՒՄ

ԵՎԵՆՏԵՐԲՈՐԴԻՈՒՄ
ԻՐԿՈՒՍՏՎՈՒՄ
ԲԻՐՅԱՆՈՒՄ
ՏՆԵՎԵՆՈՒՄ
ՍԱՐՏՈՎՈՒՄ

ՍԵՆԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌԲԸ
«ԼՈՊՈԼԴ ՆԵՅՅԵԼԼԵՐ»
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
(չ. Կ.)

Նիժեգորոդեան և Իրբիտեան տօնավաճառներում

50—19

Полицейская. 7.